

**ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ
ՎԱԶԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**



Լրացավ ՀԱՊՀ-ի «Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր» (ՄՍ և Հ) ամբիոնի վարիչ, «Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ նախագահի և ՀՀ ԳԱԱ մրցանակների դափնեկիր, տ.գ.դ., պրոֆեսոր Վազգեն Շավարշի Մելիքյանի ծննդյան 70- ամյակը:

Վազգեն Մելիքյանը 1978թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Տեխնիկական կիրառական» ֆակուլտետը: 1984թ.

Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտում ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, մեկ տարի անց՝ դոցենտի գիտական կոչում, 2006թ.՝ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և նույն տարում՝ պրոֆեսորի գիտական կոչում: 2010թ. ընտրվել է ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս, 2012թ.՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի կիրառական ռադիոէլեկտրոնիկայի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, 2014թ.՝ Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս:

2014թ. ընտրվել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

Բազմաբեղուն է Վ. Մելիքյանի գիտական և ուսումնակրթական գործունեությունը: Նա 13 մենագրությունների (որից երեքը՝ հրատարակված Springer-ում), 350-ից ավելի գիտական և 140-ից ավելի մեթոդական աշխատանքների հեղինակ է, միջազգային գիտաժողովներում ներկայացրել է 200-ից ավելի զեկուցումներ:

Վ. Մելիքյանի գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է՝ ինտեգրալ սխեմաների (ԻՍ) համակարգային մակարդակի նախագծումը և համանախագծումը, մտավոր սեփականության և հենքահեն նախագծումը, բյուրեղի վրա ցանցերի նախագծման մեթոդաբանությունը, ԻՍ-երի ֆունկցիոնալ, միջոց-գիստրային փոխանցումների և փականային մակարդակների մոդելավորումն ու ստուգումը, էլեկտրոնային սխեմաների էլեկտրական, տրամաբանական, խառը սխեմատեխնիկական և ժամանակային մոդելավորումը, ԻՍ-երի թեստավորումը, ԻՍ-երի միջմիացումների մոդելավորումը և քաղվածքը, սպառվող հզորության վերլուծությունը և ցածր հզորությամբ ԻՍ-երի նախագծումը, արագագործ ԻՍ-երի

նախագծումը, տրամաբանական նախագծումը և սխեմաների օպտիմալացումը, ազդանշանների ամբողջականության և նախագծերի հուսալիության վերլուծությունը, կիսահաղորդչային սարքերի մոդելավորումը, ֆիզիկական նախագծումը և արտադրությանը կողմնորոշված նախագծումը:

Վ.Մելիքյանը միջազգային տարբեր գիտաժողովներում բազմիցս արժանացել է «Լավագույն հոդված» մրցանակի: Նրա գիտական աշխատանքները տպագրվում են բարձր վարկանիշ ունեցող միջազգային ամսագրերում, զեկուցվում են միջազգային գիտաժողովների պլենար նիստերում: Հաջողությամբ ղեկավարում է բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտական և կրթական նախագծեր: Հանդիսանում է ՀՀ ԿԳՆ անցկացրած գիտաշխատողների՝ «Բարձր արդյունավետությամբ աշխատող» բոլոր մրցույթների հաղթող:

Վ. Մելիքյանի ղեկավարությամբ 90 ասպիրանտներ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ: Ղեկավարել է նաև 200-ից ավելի մագիստրոսական թեզեր և շուրջ 350 դիպլոմային ու ավարտական աշխատանքներ:

Վազգեն Մելիքյանը ՀԱՊՀ «Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր» ամբիոնի վարիչն է նրա հիմնադրման օրվանից՝ 2001թ. -ից, միաժամանակ հանդիսանում է «Մինոփսիս Արմենիա» ընկերության ուսումնական դեպարտամենտի տնօրենը, ՀԱՊՀ-ի և Էլեկտրոնային ավտոմատացված նախագծման բնագավառի համաշխարհային առաջատար «Մինոփսիս» ընկերության հետ համատեղ կատարվող Էլեկտրոնային ավտոմատացված նախագծման բնագավառի համաշխարհային առաջատար «Բուհ - Արտադրություն» կրթական մոդելի հիմնական իրագործողը: Նրա կողմից ստեղծված ուսումնական նյութերը և ռեսուրսները լայնորեն կիրառվում են բազմաթիվ երկրների 2000-ից ավելի առաջատար բուհերի (Մասաչուսեթսի տեխնոլոգիական, Ստենֆորդի, Բերկլիի, Քեմբրիջի, Օքսֆորդի համալսարաններ և այլն) ուսումնական գործընթացում և համաշխարհային նշանակության ընկերությունների (Ինթել, ԱյԷմԴի, Քուալքոմ, Էփլ, Սամսունգ, Անալոգ Դիվայսիս և այլն) ուսումնական կենտրոններում: Վ.Շ. Մելիքյանը հաճախ հրավիրվում է արտերկրի բազմաթիվ հայտնի համալսարաններ՝ դասախոսություններ կարդալու:

2004թ. դեկտեմբերի 1-ին «Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ի և ՀՊՃՀ-ի միջև կնքված համագործակցության համաձայնագրով ՄՍ և Հ ամբիոնը դարձավ «Մինոփսիսի» համաշխարհային համալսարանական ծրագրի անդամ և օգտվում է ընկերության կողմից բարձրորակ կրթությամբ ուսանողների պատրաստմանը նպատակաուղղված համաշխարհային համալսարանական ծրագրերի խողովակով կրթական և հետազոտական 1900 հաստատություններին տրամադրվող գործիքային միջոցներից ու տեխնոլոգիաներից:

Ամբիոնն իրականացնում է բակալավրական, մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրեր: Ուսանողների ընտրությունը կատարվում է «Մինոփսիս» ընկերության փորձառու մասնագետների և համալսարանի առաջատար դասախոսների կողմից: Բակալավրական ծրագրի հիմնական կրթական փուլից՝ 2-րդ կուրսից հետո ուսանողները մրցույթով անցնելով կարող են շարունակել իրենց ուսուցումը համատեղ կրթական այս ծրագրով:

Բակալավրական, մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերն իրականացվում են ՄԱՈԻԴ-ի կողմից մշակված «Ինտեգրալ սխեմաների նախագծում և էլեկտրոնային նախագծման ավտոմատացում» ուսումնական ծրագրերով: Այս համապարփակ ուսումնական ծրագրերը կազմվել են SS և կիսահաղորդչային արդյունաբերության ոլորտների առաջատար ընկերությունների ներկայիս պահանջների հաշվառմամբ և ոլորտի լավագույն փորձագետների և դասախոսների ներգրավմամբ:

Դասերն անցկացվում են հատուկ սարքավորումներով հագեցած լսարաններում, որտեղ յուրաքանչյուր ուսանող ունի հնարավորություն՝ օգտվելու «Մինոփսիս» ընկերության կողմից նվիրաբերված նորագույն ԷՆԱ ծրագրային գործիքային միջոցներից և ստեղծելու բազմապիսի ուսումնական նախագծեր: Դասավանդումը, ինչպես և կուրսային նախագծերի, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և թեկնածուական ատենախոսությունների ղեկավարումներն ուղղորդված են «Մինոփսիս Արմենիայում» կատարվող արդյունաբերական նշանակությամբ նախագծերին, որոնք իրականացվում են «Մինոփսիսի» առաջատար փորձագետների և համալսարանների փորձառու դասախոսների կողմից: Ըստ համալսարան-արդյունաբերություն կրթական մոդելի՝ ինչպես ՀԱՊՀ որակյալ դասախոսները, այնպես էլ «Մինոփսիս» ընկերության լավագույն մասնագետները մրցութային եղանակով հրավիրվում են դասավանդելու ամբիոնում: Կրթողների այսպիսի լայն բազմազանությամբ ապահովվում է տեսական գիտելիքների և առաջավոր ճարտարագիտական փորձի համատեղումն ամբիոնում:

ՀԱՊՀ-ում արդեն 23 տարի հաջողությամբ կիրառված «Մինոփսիսի» կրթական մոդելը՝ Արդյունաբերություն/Բուհ սերտ համագործակցությամբ, ապահովում է մասնագետների պատրաստման գործընթացի՝ արդյունաբերության պահանջներին առավելագույնս մոտ լինելու հնարավորություն: «Մինոփսիս» ընկերության լուծումների օգտագործումն ուսանողներին դեռևս ուսումնառության ընթացքում ընձեռում է աշխատաշուկային անհրաժեշտ գիտելիքների յուրացման հնարավորություն, իսկ շրջանավարտները ձեռք են բերում բարձր որակավորում և տիրապետում են անհրաժեշտ հմտությունների՝ ինչպես «Մինոփսիս Արմենիայում», այնպես էլ SS ոլորտի այլ առաջատար ընկերություններում աշխատելու համար:

ՀԱՊՀ-Մինոփսիս համատեղ գործող ամբիոնն իր ծրագրի իրագործման 25 տարիների ընթացքում հասել է ակնառու հաջողությունների. 90 ասպիրանտներ հաջողությամբ պաշտպանել են ատենախոսությունները՝ ստանալով գիտությունների թեկնածուի որակավորում: Մինչ օրս ամբիոնը թողարկել է 1500 շրջանավարտ, որոնց 100%-ն աշխատում է մասնագիտական ոլորտում, այդ թվում՝ շուրջ 70%-ը «Մինոփսիսում», մնացածը՝ տեղական SS ոլորտի այլ ընկերություններում:

Նշանակալից է Վ. Մելիքյանի գործունեությունը նաև կրթական-հասարակական ասպարեզում. 2007թ. -ից հանդիսանում է ՀԱՊՀ Գիտական խորհրդի անդամ, 2020թ. -ից՝ ՀԱՊՀ Հոգաբարձուների խորհրդի անդամ, 2021թ. -ից՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, 2021թ. -ից՝ IEEE ավագ անդամ: Մի շարք բուհերի, այդ թվում՝ նաև Քսիյանի համալսարանի (Չինաստան), Մոսկվայի էլեկտրոնային տեխնիկայի ինստիտուտի (Ռուսաստան), Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի պատվավոր պրոֆեսոր է, բազմաթիվ միջազգային հեղինակավոր գիտական պարբերականների խմբագրական կոլեգիաների անդամ և գլխավոր խմբագիր, միջազգային գիտաժողովների ծրագրային հանձնաժողովների նախագահ, անդամ կամ բաժանմունքի ղեկավար, ատենախոսությունների պաշտպանությունների մասնագիտական խորհուրդների նախագահ և անդամ, Միկրոէլեկտրոնիկայի հայաստանյան ամենամյա միջազգային օլիմպիադայի ծրագրային կոմիտեի նախագահ, SS ոլորտում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամ, գիտության և տեխնոլոգիայի ոլորտում ՀՀ նախագահի մրցանակի հանձնաժողովի նախագահ, SS բնագավառում լավագույն ուսանողներին և աշակերտներին շնորհվող կրթական պարգևների մրցանակաբաշխության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար:

Նրա վաստակը նշանավորված է բազմաթիվ պետական պարգևներով և գերատեսչական մեդալներով. ՀՀ վարչապետի «Հուշամեդալ» Գիտության և կրթության զարգացման գործում ներդրած ավանդի համար, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության բարձրագույն պարգև՝ «Ոսկե մեդալ» Կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար, ՀՀ պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյան», «Գարեգին Նժդեհ» և «ՀՀ զինված ուժերի 20 տարի» մեդալներ, ՀԱՊՀ «Ոսկե մեդալ», Երևանի պետական համալսարանի «Ոսկե մեդալ», Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի «Ոսկե մեդալ», Եվրոպական համալսարանի «Ոսկե մեդալ», «ՎիվաՄել» ընկերության «Ոսկե մեդալ» և այլն:

Վ. Մելիքյանին 2006թ. ՀՀ Նախագահի հրամանագրով շնորհվել է ՀՀ Գիտության վաստակավոր գործչի կոչում:

Վազգեն Մելիքյանը ավագ ընկեր ու խորհրդատու է իր ասպիրանտների համար, սրտացավ և հոգատար է ամբիոնում ուսումնառող յուրաքանչյուր

ուսանողի նկատմամբ, իր գործին անսահման նվիրվածությամբ և հանրապետական ու միջազգային գիտակրթական ասպարեզներում իր համակողմանի գործունեությամբ բարձր է պահում ՀԱՊՀ հեղինակությունը, վայելում է պոլիտեխնիկական համայնքի սերն ու հարգանքը:

ՀԱՊՀ ռեկտորատը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողական խորհուրդը հոբելյանի առթիվ շնորհավորում են Վազգեն Մելիքյանին, մաղթում նրան ամենայն բարիք, նորանոր նվաճումներ հայրենական ու միջազգային գիտության և ուսումնակրթական ասպարեզներում: